

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍՐԲՈՑ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱՓԱՌ
ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՍԵ Է

*«Աղոթքի մեջ կարևոր է և օգտակար
դիմել Աստծո սրբերին՝ բարեխոսելու առ
Աստված»:*

(Բարսեղ Մաշկևորցի)

Հայոց Եկեղեցու վարդապետության համաձայն, մախքան Հիսուս Քրիստոսի Երկրորդ գալստյամբ տեղի ունենալիք Ահեղ Դատաստանը, մահից հետո աղամորդու հոգին, աշխարհում իր վարած կյանքի համաձայն, հանգրվանում է արդարների կամ մեղավորների օթևաններում¹: Այդ ժամանակավոր օթևաններից Արդարոց կայանն իր հերթին (իմչպես և Մեղավորաց կայանը) բաղկացած է մի քանի բաժանումներից: Ահա և այն հոգիները, որոնք անցավոր այս աշխարհում ապրել են քրիստոնեական ճանճով և սուրբ կյանքով՝ հանգրվանել են (և տակավին հանգրվանելու են) Արդարոց օթևանի այն բաժնում, որն առավել մերձ է Ամենասուրբ Երրորդությանը:

Քրիստոս Աստծո Ս. Եկեղեցու հայրերը, Ամենակալ Տիրոջ հայտնությամբ, հատկորեն սահմանել են քրիստոնեական անճառելի միության՝ Եկեղեցու էությունը՝ նշելով, որ Քրիստոս Աստծո «ԽՈՐՀՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» Ս. Եկեղեցին բաղկացած է Զինվորյալ Եկեղեցուց և Հաղթական Եկեղեցուց²:

Զինվորյալ Եկեղեցին հավատացելոց այն միությունն է, որը տակավին աշխարհում է և մարտնչում է սատանայի փորձությունների դեմ³, իսկ Հաղթականը՝ այլևս

¹ «Հարկ է ուրեմն, ըստ Եկեղեցույ աւանդութեան, ընդունիմք, թէ վախճանեալներու հոգիները ունին առժամեայ կացութիւն մը, ոչ ամսման ակնկալեալ բարիքներէ եւ ոչ զերծ երկուցումած չարիքներէ, եւ թէ հոգիներու կայանները տարբերեալ են ըստ հանգամանաց...» (տե՛ս *Մաղաքիա արքեպս. Օրմանեան*, «Տեղիք աստուածաբանութեան», Երուսաղէմ, 1985, էջ 187):

² Ամենասուրբ Երրորդության Ս. Եկեղեցու մաս է կազմում նաև Անդրանկաց եկեղեցին. «...Առաջինն է Անդրանկաց՝ յերկինս լուսերամ դասք հրեշտակաց, որք անդադար սրբաբանութեամբ կան մնան անլոելի փառաբանիչք Սուրբ Երրորդութեան» (տե՛ս *Մատթէոս Կաթողիկոս Ամենայն Հայոց*, «Ուղեցոյց քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան», Մոսքուա, 1861, էջ 87: Տե՛ս նաև՝ «Տեղիք աստուածաբանութեան», էջ 18-19):

³ «Բաժանի Եկեղեցին Քրիստոսի ի Զինուորեալ, վասնզի յաշխարհի աստ ժողովք ուղղափառ հաւատացելոց՝ միաբան եւ միակիւսն ճշմարիտ դաւանութեամբ հաւատոյ զինուորեալ են իբրեւ քաջամարտիկ զինուորք Յիսուսի, առ ի յաղթահարել՝ զհոգեկոյրոյս խաւարատոյ մոլորութեան եւ մոլորեան գաղտնորոգայթ չարութիւնս դիական հնարից եւ պատրամաց» (տե՛ս Ուղեցոյց...., էջ 89-90):

աշխարհին, մեղքին ու սատանային հաղթած այն սուրբ հոգիների միավորությունն է, որը գտնվում է Արդարոց օթևանում և սպասում երկնքի Արքայության ժառանգմանը⁴:

Ինչպես վերը նշեցինք, Արդարոց կայանն ունի մի քանի ստորաբաժանում, այսինքն՝ թեև քրիստոնյա հավատացյալներն աշխարհում ապրել են քրիստոնեական լի ու սուրբ կյանքով, սակայն նրանցից յուրաքանչյուրն արժանացել կամ էլ արժանապաշտ է այն վարձատրությամբ, որին ինքն իր առաքինությունների գործերով արժանի է դարձել (Ղուկ. ԺԺ 11-27):

Արդ, քանի որ Ս. Եկեղեցու շատ անդամներ ծաղկեցին ու փառավորվեցին զանազան առաքինություններով և դրանց գործերով, ուստի Ամենասուրբ Երրորդության հաճությամբ նրանք հանգրվանեցին Արդարոց օթևանի այն հատվածում, որի բնակիչներն արժանանում են առանձնահատուկ այն պարգևին, որ է՝ բարեխոսությունն աշխարհում մեղքի ու սատանայի դեմ մարտնչող, Հաղթական Եկեղեցուց անքակտելի, Զինվորյալ Եկեղեցու համար⁵: Եվ, բնականաբար, Մարտնչող Եկեղեցին պիտի դիմեր իրենցից անբաժանելի Հաղթական Եկեղեցու բարեխոսությանը, որովհետև «*ո՞ւմ պիտի դիմենք, ո՞ւմ պիտի պատմենք մեր (այս) վիշտն ու տառապանքները, և կամ մեզ համար ո՞ւմ միջնորդ և բարեխոս դարձնենք առ Աստված, եթե ոչ մեր առանձնահատուկ բարեկամներիդ ու ծանոթներիդ, Աստծո սիրելի ու հաճելի ծառաներիդ*»⁶:

Ահավասիկ ուղղափառ վարդապետության մի մաս՝ Սրբոց բարեխոսություն⁷ (intercession of the saints), որն անմիտների ու մոլորյալների համար զայթակողության վնաս է: Այո, որովհետև ինչպես շատերը չեն կարողանում ընկալել (այնքանով, որ Ամենակալ Տերը հայտնությամբ հասու է դարձրել) քրիստոնեական շատ խորհուրդներ, այնպես էլ կան անձինք, կրոնական չարափառ ուղղություններ և «եկեղեցիներ», որոնք ոչ միայն չեն ընդունում Ուղղափառ Եկեղեցու ՀԱՎԱՏԱՄԲԻ մաս եղող Սրբոց բարեխոսության վարդապետությունը⁸, այլև ընդհանրապես չեն

⁴ «...Եկեղեցին բաժանի ի Յաղթական, որք են խումբ երանեալ հոգւոց սրբոց՝ առաքելոց, մարգարէից, կուսանաց եւ մարտիրոսաց, որք յաշխարհի աստ զօրութեամբ եւ շնորհօք Փրկչին մերոյ յաղթօղ ամենայն փորձութեանց եւ նեղութեանց հանդիսացան հաւատով, եւ գործով ճգնեալ ի մարմնի ըստ բարեխնամ բարեբար կամացն Աստուծոյ, հետեւողք գտան կոչմանն Յիսուսի, վասն որոյ դասակցեցան յերկինս ընդ զօրավարիմ՝ զուարթնոցն, եւ յար փառաբանիչ Սուրբ Երրորդութեան կան եւ մնան» (տե՛ս «Ուղեցոյց քրիստոնեական...», էջ 88):

⁵ «Որք փորձեցայք շիջանուտ հրով, ժառանգեցիք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն. համարձակութիւն ունիք բարեխօսել առ Տէր վասն անձանց մերոց» (տե՛ս «Ձայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 463):

⁶ Տե՛ս սույն հոդվածը:

⁷ «...Սրբոց բարեխօսութիւնը՝ մեզ կենդանեացս համար աղօթք ընել է առ Աստուած, ինչպէս որ մեք կենդանիքս աղօթք կընենք համօրէն հանգուցելոց եւ կենդանեաց համար» (տե՛ս Տ. Սահակ քհն. Տէր-Սարգսեան, «Հնձական կրօնագիտութիւն», Կ. Պօլիս, 1874, էջ 567):

⁸ «...Սրբոց բարեխօսութիւնը՝ Սուրբ Գիրքերէն քարոզուած անտարանական ճշմարտութիւն է. Սուրբ Գրոց հին աւանդութիւն է, Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն ուղղափառ հաւատոյ մասն է, իսկ չընդունիլը՝ եւ ուրանալը սրբոց բարեխօսութիւնը՝ ճորահար աղանդ մըն է, որ վեշտասաներորդ դարէն

ուզում խորամուխ լինել այդ վարդապետության էության մեջ⁴։ Ռիրավի «մարդիկ, որ միշտ ուսանում են, բայց երբեք չեն հասնում ճշմարտության գիտությանը» (Բ Տիմոթ. Գ 7)։

Արդարև, մարդկության միակ բարեխոսն ու միջնորդը մեր Տեր Հիսուս Քրիստոսն՝ Մարդեղացած Աստվածորդին է. «*Քանզի մեկ Աստված կա և մեկ միջնորդ՝ Աստծո և մարդկանց միջև. Հիսուս Քրիստոս՝ մարդը, որ տվեց ինքն իրեն որպես փրկանք բոլորի համար՝ ի վկայություն իր ժամանակների*» (Ա Տիմոթ. Բ 5-6)։ Սակայն ուշադիր պետք է լինենք, թե այդ միջնորդությունն ու բարեխոսությունը սրբազան Պողոս առաքյալը ի՞նչ առումով է համարել մեկ, անկրկնելի⁵։

Ահա այն վեճը, որին⁶ իրենց բարեխոսող համարող չարափառ շատ ճյուղավորումներ բախվելով, սկսում են ճառել ընդդեմ Սրբոց բարեխոսություն վարդապետության։ Իհարկե, մրանք ամեն կերպ (և՛ սուրբգրային ամհամապատասխան վկայություններով ու դրանց սխալ մեկնաբանություններով, և՛ կենցաղային պարզունակ «տրամաբանական» օրինակներով) փորձում են պարզամիտ ու անուս ունկնդիրներին համոզել իրենց մտացածին, ըստ այդմ էլ ստապատիր, տեսությունն ընդունելու համար։ Սակայն, հայտնի է, որ ավագի վրա կառուցված յուրաքանչյուր շինություն երբեք-երբեք չի կարող ապահով ու հաստատուն մնալ, ուստի և հերետիկոս-աղանդավորների ամփրավ ու սուտ տեսությունները՝ ընդդեմ Սրբոց բարեխոսության, Քրիստոս Աստծո Ս. Եկեղեցու ուղղափառ դավանությամբ (հիմնված «Աստուածաշունչ» մատյանի և եկեղեցական սրբազան ավանդության վրա), ինչպես անցյալում, այնպես էլ այսօր և միշտ, մերժման ու հերքման են ենթակա. այն, ինչ որ դավանում է ՄԵԿ ԸՆԴՀԱՆՐԱՍԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ, չի կարող

սկսալ...» (տե՛ս «Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցու. յօրինեաց Տեր Մատթեոս արքեպիսկոպոս մախիկն պատրիարք Կ. Պոլսոյ եւ այժմ կաթողիկոս Ամենայն Հայոց եւ ասպետ, որոյ հրամանաւ տպագրեցաւ երկրորդ անգամ», Տիփլիս, 1860, էջ 391- 392)։

⁴ «Սուրբերուն երբեք չենք ընծայեր բան մը, որուն վերջը ի Քրիստոս չյանգի, ու ոչինչ կակնկալենք անոնցմէ՝ իբրեւ թէ իրենց միջոցաւ կատարելի, այլ միայն զանոնք կընենք ընտրելագոյն ծառայակիցներ, որոնք մենէ աւելի համարձակութիւն ունին մեր Տիրոջ առջեւ» (տե՛ս «Տեղիք աստուածաբանութեան», էջ 178)։

⁵ «...Թէ որ ուղիղ մտօք հայելու ըլլաւ Սուրբ Գրքին, կարող կըլլաւ Հոգւոյն Սրբոյ շնորհիւր հասկընալ, թէ ինչո՞ւ Յիսուսի Քրիստոսի համար կըսվի միայն բարեխոս առ Հայո Աստուած. վասն զի Յիսուսի մահուամբը մեզի փրկութիւն եղաւ, եւ անոր յարութեամբը մեզի յափտեմական կեանք պարգեւեցաւ, եւ ան եղաւ քաւութիւն մեղաց մերոց, անոր համար Յիսուս Քրիստոս իրեն տնօրէնութեամբը, եւ իւր փրկարար մահուան արդեամբքը մի միայն բարեխոս է առ Էակիցն իւր առ Հայո Աստուած, եւ անոր մեմա ուրիշ բարեխոս մի չի կայ մարդկային բնութեան փրկութեանը եւ ազատութեանը սատանայի գերութենէն» (տե՛ս «Հանդիսարան ուղղափառութեան...», էջ 394-395)։ Նաև՝ «Յիսուսի միակ միջնորդութիւնը՝ ինչպէս կուսուցանեն Ս. Գիրք, մարդկային ազգը յափտեմից դատապարտութենէն ազատելու համար իւր անձը փրկանք տալ, Աստուծոյ եւ մարդուն մէջ տեղի եղած ուխտին մարդոց կողմանէ խզուած ըլլալու մեն անօրէնութեան փոխարէն, եւ այն ուխտը վերստին ճորոգելու միջնորդ ըլլալ, անձամբ երաշխարկելով անոր պահպանութեան. այս է ահա, զոր կը վարդապետեն Աստուածատու Պատգամք» - (տե՛ս «Քննական կրօնագիտութիւն», էջ 568; ինչպես և՛ տե՛ս *Օճորհք արքեպ. Գալուստեան*, «Աստուածաշնչական սուրբեր», Երեւան, 1997, էջ 24-30)։

սխալ լինել, քանզի Եկեղեցին, որի գլուխը Քրիստոս Աստված է, անսխալական է ու հավիտենական: Հետևաբար ոչ ոք չի կարող Եկեղեցու դավանանքի այս կամ այն սկզբունքը, կամայականորեն, մերժել կամ ընդունել. Եկեղեցին ինչ որ սահմանել է, պարտադիր կերպով, առանց վերապահության, ընդունելի պետք է լինի նրա բոլոր անդամների համար:

Ի վերջո, ՄԵԿ ԸՆԴՀԱՆՐԱՍԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՑ դուրս չկա՝ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, ինչպես և նույն այդ Եկեղեցու ուղղափառ հավատքից ու դավանաբանությունից զատ չկա՝ մեկ այլ ճշմարիտ, սուրբ և փրկարար հավատք ու դավանանք առ Ամենասուրբ Երրորդությունը. «Յուսամ՝ զի ուղղափառ Եկեղեցույն Հայոց որդիք, բարեպաշտ եւ հոգեսէր ազգ մեր սիրելի, լուսատոբեալ անաղօտ Քրիստոսական հաւատոյ լուսով՝ ո՛չ մոլորիցին երբէք իբրեւ զտկարամիտս ի բանից մոլորեցուցաց»¹⁰:



Ստորև արևելահայերենի վերածած ներկայացնում ենք Երջանկաճիշատակ Սիմեոն Ա. Երևանցու բարեխոսական աղոթքը:

Երիցս ճշմարիտ է Հայոց վարդապետներից Բարսեղ Մաշկևորցին, որ գրում է՝ «աղոթքի մեջ կարևոր է և օգտակար դիմել Աստծո սուրբերին՝ բարեխոսելու առ Աստված»¹¹: Այո, քանի որ մահկանացու արարածներից միայն նրանք կարողացան «զպէսպէս նեղութիւնս եւ զանազան չարչարանս կրելով» հասնել երանելի վիճակի՝ ժամանակավոր օթևաններում սպասելով ամանց Արքայության ժառանգմանը: Այո, որովհետև միայն Աստծո ընտրյալ ծառաները՝ երկնաբնակ սուրբերը համարձակություն ունեն առ Աստված միջնորդելու և բարեխոսելու՝ որպես Նոր Ովստի Աբրահամներ, Մովսեսներ ու Դավիթներ իրենց երկրաբնակ ազգակիցների համար:

Կարի սքանչելի է Հայոց շնորհաշատ Սիմեոն Հայրապետի սույն բարեխոսական աղոթքը, քանզի նա «մեծակական ողբով եւ լալագին աչօք» դիմում է մեր ազգի բազմերախտ հայրերին և մեր հոգիների ու մարմինների լուսավորիչներին և աղաչում, որ նրանք հիշեն իրենց հոգեծին սերունդներին և բարեխոսեն առ Աստված, «զի ողորմեսցի մեզ եւ այց արասցէ, վերամորոգեսցէ զհնութիւն ազգիս եւ եկեղեցեաց մերոց...»:

Ուստի և անհրաժեշտ է, որ մենք էլ, մեր լուսահոգի Հայրապետի այս բարեխոսական աղոթքով, «արտասուաթոր աչօք» դիմենք մեր Մայր Եկեղեցու երկնաբնակ սուրբերին և խնդրենք նրանց, որ անդադար բարեխոսեն Ամենասուրբ Երրորդությանը՝ մեզ, մեր Ս. Եկեղեցուն ու հայրենի երկիրը փրկելու «յամենից փորձութեանց» և արժանացնելու, որ մենք էլ նրանց հետ Երկնքի արքայության մեջ փառավորենք «զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին». ամեն:

¹⁰ «Ուղեցոյց քրիստոնէական...», էջ Ը:

¹¹ «Աղօթագիրք», էջ 325: